



*Համարը N 923-Ա
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը Չի հրապարակվել
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ փոխվարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.07.2019*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 20.06.2019
Ստորագրման ամսաթիվը 25.07.2019
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 580-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2019 թվականի N 923-Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 580-Ս ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի «Նախարարությանը ենթակա մարմինների ենթակայությունը սահմանելու մասին» N 580-Ս որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- 1) 5-րդ ենթակետում «Բնապահպանության» բառը փոխարինել «Շրջակա միջավայրի» բառերով.
- 2) ուժը կորցրած ճանաչել 6-րդ ենթակետը.
- 3) 7-րդ ենթակետում «Կրթության և գիտության» բառերը փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով.
- 4) ուժը կորցրած ճանաչել 8-րդ ենթակետի «ա» պարբերությունը.
- 5) 9-րդ ենթակետում՝
 - ա. «Տարածքային կառավարման և զարգացման» բառերը փոխարինել «Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների» բառերով,
 - բ. «մարմին է» բառերը փոխարինել «մարմիններն են» բառերով,
 - գ. ենթակետը լրացնել «բ. Ջրային կոմիտեն, գ. Պետական գույքի կառավարման կոմիտեն, դ. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեն» պարբերություններով.
- 6) 10-րդ ենթակետում՝
 - ա. «Տնտեսական զարգացման և ներդրումների» բառերը փոխարինել «Էկոնոմիկայի» բառով,
 - բ. ուժը կորցրած ճանաչել «բ» պարբերությունը.
- 7) 11-րդ ենթակետում՝
 - ա. «Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերը փոխարինել «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության» բառերով,
 - բ. ուժը կորցրած ճանաչել «ա» պարբերությունը,
 - գ. ենթակետը լրացնել «ա. Ռազմաարդյունաբերության կոմիտեն» պարբերությամբ:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ

Տ. Ավինյան

2019 թ. հուլիսի 25
Երևան